

Մոր արյան մեջ կապարի բարձր մակարդակը՝ որպես երեխայի ճարպակալման պատճառ



Համաձայն նոր հետազոտության, արյան մեջ կապարի բարձր մակարդակ ունեցող մայրերից ծնված երեխաների մոտ ավելորդ քաշի և ճարպակալման հավանականությունը 4 անգամ բարձր է: «JAMA Network Open» ամսագրում հրապարակված հետազոտությունը համեմատել է արյան մեջ կապարի բարձր մակարդակ ունեցող կանանցից ծնված երեխաների և կապարի ցածր պարունակությամբ կանանցից ծնված երեխաների քաշերը: Հետազոտողները ուսումնասիրել

են 1442 զույգ մայրերի և երեխաների տվյալները: Արյան նմուշները վերցվել են ծննդաբերությունից 24-72 ժամ անց: Հետազոտողները պարբերաբար, մանկության ողջ ժամանակահատվածում արձանագրել են երեխաների քաշը: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ճարպակալման համաճարակը հնարավոր է կապված լինի արգանդում պտղի վրա քիմիական նյութերի ազդեցության հետ: Այնուամենայնիվ, կապարի բարձր մակարդակ ունեցող կանանց շրջանում երեխաների ճարպակալման ռիսկը նվազել է, եթե ծննդաբերությունից հետո մոր արյան մեջ առկա են եղել ֆոլաթթվի համարժեք մակարդակներ: Ֆոլաթթուն վիտամին Բ-ի տարատեսակ է, որը կարող է կանխել նյարդային խողովակի այնպիսի արատներ, ինչպիսին «սպինա բիֆիդա»-ն է: Առողջապահության մասնագետները կանանց խորհուրդ են տալիս օրական ընդունել 400 մգ ֆոլաթթու՝ վիտամին Բ-ի սինթետիկ տարբերակը: Հետազոտողները նաև հարցրել են կանանց, թե արդյո՞ք նրանք ընդունել են ֆոլաթթու հղիության երկրորդ և երրորդ երամսյակներում: Ենթադրվում է, որ մանկական ճարպակալման ռիսկը կարելի է նվազեցնել՝ հետազոտելով կանանց արյան մեջ կապարի պարունակությունը, և, բարձր մակարդակ հայտնաբերելու դեպքում՝ խորհուրդ տալ ընդունել ֆոլաթթվի հավելումներ:

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Կապարը ներկերում» ծրագրի շրջանակում:

